

# Լրատու

Թիւ 15  
Ապրիլ 2010

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի

Սիրելի հայրենակիցներ,

Վատահ եմ, թէ անհամբեր կը սպասէք «Լրատու»ի Եռամսեայ հրատարակութեան, տեղեկանալու Ներկայացուցիչին, ինչպէս նաեւ Երեսփոխանական Գրասենեակին կողմէ տարուած առօրեայ աշխատանքներուն, գաղութի ներքին իրադարձութիւններուն եւ Կիպրոսի Հանրապետութեան օրենքներուն առնչութեամբ կատարուած փոփոխութիւններուն կամ նորութիւններուն մասին:

Վերոյիշեալ տողերը անվարան ու հաստատօրէն կ'արձանագրեմ, քանի որ «Լրատու»ի հասցեացանկը վերջին չորս տարիներուն ընթացքին 20% յաւելում արձանագրած է: Գրասենեակ հեռաձայնելով, գաղութի անդամները կամ մեր հայրենակիցները իրենց հասցեները կը փոխանցեն, փափաք յայտնելով ստանալ «Լրատու»ն եւ կամ ընակարան փոխելու պարագային, տեղեակ կը պահեն մեզ նոր հասցեին կապակցութեամբ: Երախտագիտութիւնս կը յայտնեմ բոլորին, որոնք հետաքրքրուած են ու կը հետեւին մեր աշխատանքներուն:

Յունուարի մէջ, Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքապիսկոպոսին եւ Ազգային Իշխանութենէն պատուիրակութեան մը հետ, այցելեցի Նիկոսիոյ Ս. Աստուածածին իին Եկեղեցին, ուր UNDP-ACT-ի պատասխանատու Jaco Cilliers, մեզի տեղեկացուց վերանորոգութեան աշխատանքներուն երկու փուլերով իրականացուելիք ծրագրին մասին: Ուրախ եմ յայտնե-

լու, թէ սկզբնական աշխատանքները սկսած են եւ շուտով պիտի ձեռնարկուի առաջին փուլի գործադրման: Այս մասին անդրադարձած ենք 7-րդ Եջին մէջ:

Մեր հայրենակիցներուն անցագրային ու զանազան տեսակի հարցերը դիւրացնելու նպատակով, Փետրուար 5ին եւ 6ին Կիպրոս հրաւիրեցի ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանութեան հիւպատոս Տիկ. Լիանա Գրիգորեանը: Այս մասին կարդալ «Լրատու»ի յաջորդող Եջերուն մէջ:

Փետրուարի մէջ տեղի ունեցաւ ՏԻՍԻ Կուսակցութեան կազմակերպած «Կիպրոսի Փոքրամասնութիւններու Զաղաքական Ապագան» Նիւթով հաւաք մը, որու ընթացքին խօսք առին Կիպրոսի Երեք Կրօնական Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչները: Ձեռնարկին գծով յաւելեալ մասրամասնութիւններ տրուած են «Լրատու»ի 12-րդ Եջով:

Յս կը փափաքիմ անդրադառնալ SIGMA հեռատեսիլի կայանեն Փետրուար 23ին սփռուած «Յայերը Կիպրոսի մէջ» յայտագիրին, որ յաջորդող օրերուն լայն արձագանգ գտաւ Կիպրացի հասարակութեան մօտ, որոնք դրական արտայայտութիւններով վերահաստատեցին Կիպրահայ գաղութին ունեցած կազմակերպւածութիւնն ու իւրայատկութիւնը:

Ինչպէս գիտէք, այս տարի Յայկական Ցեղասպանութեան 95ամեակն է: Որպէս տիպար ու պահանջատէր հայեր, իւրաքանչիւրիս պարտքն է մեր ներկայութեամբ քաջալերել եւ թիկունք կանգնիլ Յայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման Յանձնախումբին կազմակերպած ձեռնարկներուն, վերանորոգելով մեր ուխտը ու սատար հանդիսանալով Յայ Դատին գծով տարուող գերմարդկային աշխատանքներուն:

Գալով Երեսփոխանական Գրասենեակի եւ Ազգային Առաջնորդարանի մօտալուտ միացեալ ձեռնարկին, հաճոյքով կը փոխանցեմ, թէ 9 Մայիս 2010ին, երորդ անգամ ըլլալով դարձեալ պիտի այցելենք Ս. Մակարավանք: Յոյսով եմ, որ այս տարի եւս մեծ թիւով ազգայիններ կը մասնակցին այս ուխտագնացութեան:

Վերջերս, Մակարավանք այցելելու թերթիկին հետ միասին, ստացաք 17.03.2010 թուակիր հաղորդագրութիւնը, որու միջոցով գաղութը տեղեակ պահեցի, յառաջիկայ Յուլիս ամիսն սկսեալ Նարեկ Կարժարաններու շրջանաւարտները անխտիր, երկու շաբաթով, Հայաստան ուղարկելու որոշումս: Գոհունակութեամբ կ'ընդգծեմ, թէ երկար տարիներու ունեցած փափաք վերջապէս պիտի իրականանայ եւ մեր պատանիները անմոռանալի ճամբորդութիւն մը պիտի կատարեն դեպի հայրենիք ու վերադառնան յիշատակելի տպաւորութիւններով: Այս գծով ձեզի ուղարկուած հաղորդագրութիւնը ամբողջութեամբ արտատպած ենք «Լրատու»ի այս թիւին մէջ:

Իսկ, Ուրբաթ, 14 Մայիս 2010ին «Սեռային Դաստիարակութիւն եւ Առողջ Յարաբերութիւն» նիւթով ձեռնարկ մը պիտի ունենանք Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մէջ, մեր պատանիներն ու երիտասարդները, ինչպէս նաև ծնողները քաջատեղեակ պահելու սեռային վատառողջ յարաբերութիւններու արծարծած վտանգներն: Օրուան նիւթը յունարենով եւ համակարգիչի օգտագործումով պիտի փոխանցէ Տիկ. Տեսօ Հաճիլիզուն, որ «Ընտանեկան Ծրագրում» Կազմակերպութեան նախկին գործադիր տնօրենն էր: Խիստ կը քաջալերենք բոլոր 16 տարեկանեն վեր եղող երիտասարդներն ու անոնց ծնողները, օգտուելու այս շահե-

կան դասախոսութենեն: Ներփակ պիտի գտնեք ձեռնարկին մասին յաւելեալ տեղեկութիւններ պարփակող թերթիկը:

Խօսքիս վերջաւորութեան, ուրախութեամբ կը տեղեկացնեմ, թէ մօտ ապագային յունատառ թերթերուն մէջ լոյս պիտի տեսնէ Յայ ժողովուրդի ու Կիպրահայ գաղութի պատմական հոլովոյթին, մշակութային ժառանգութեան, լեզուին ու կրօնքին մասին յօդուածներու շարք մը, պատրաստուած Երեսփոխանական Գրասենեակի Օտար Մամլոյ Ներկայացուցիչ Ալեքսանդր Յաճիլիրայի կողմէ: Այս նախաձեռնութեամբ, կը միտինք Կիպրոսի քևակչութեան ծանօթացնել Յայ ժողովուրդի եւ Կիպրահայ գաղութի դարերու ընթացքին կերտած ու ժողովուրդներու պատմութեան մէջ իր իւրայատուկ դրոշմը ծգած ազգի մը առաքելութիւնը:

Սիրելիներ,

Յայ Առաքելական Եկեղեցւոյ Ս. Զատիկին առիթով ընդունեցեք իմ սրտագին բարեմաղթութիւնները:

Զրիստոս յարեաւ ի մեռելոց, օրինեալ Է Յարութիւնն Զրիստոսի:

**Վարդգես Մահտեսեան**

**Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌՎԱԽՍԵՎՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքի (Aliens & Immigration Unit) կառոյցներու փոխադրութեան պատճառով, Երեսփոխանական Գրասենեակի առօրեայ աշխատանքները մեկ ամսուայ դադարէ մը ետք, կանոնաւրութեամբ վերսկսան 7 Յունուար 2010-ին սկսեալ:

Տեղին է յիշել, թէ մօտաւորապէս երեք ամիսներ անցած են տեղափոխութեան թուականեն, սակայն գործոքը դանդաղ կ'ընթանան, անձնակազմի կարգ մը անդամներու պաշտօններու փոփոխութեան, յաճախակի համակարգչային խանգարումներու, ինչպէս նաեւ մեծ մասամբ թղթաձրարներու տակաւին հին արխիւատուներուն մէջ գտնուելուն պատճառներով:

Միեւնոյն ժամանակ, Յունուար 2010-ին խստացաւ երրորդ աշխարհի հպատակներուն Կիպրոս ժամանակաւոր այցելելու, դեսպանատուններին անցագիրներուն մէջ կնքուած վաւերագիրի (visa) պայմանները: Յրաւիրողին կողմէ դեսպանատուն ուղարկուած հրաւերին կողքին (Խոտարին մօտ վաւերացուած), անհրաժեշտ է ապահովել նաեւ դրամատնային երաշխաւորագին (Bank Guarantee), հաստատուած Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին կողմէ, որոնց հիման վրայ դեսպանատունը կը շնորհէ սահմանուած ժամանակամիջոցով եւ աներկարածգելի ժամկետով (final) այցելութեան արտօնութիւն:

Իսկ, որպէս այցելու (visitor), Կիպրոս քնակութեան թոյլտուութեան երկարածգման դիմումնագիրները յետ այսու կ'ընդունուին որոշ վերապահութիւններով, նախօրը Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքի տևորենուիին ուղղուած նամակին հաւանութենեն

Ետք միայն:

Աշխատանքային Նախարարութիւնն ալ Յունուարէն սկսեալ որոշ սահմանափակումներ կատարեց կարգ մը արհեստներու գծով օտարահպատակ գործառներու Եւ ուսանողներու աշխատանքային հրամաններուն կապակցութեամբ, Կիարոսի Մեջ անգործութեան ծաւալոյ տագնապին առաջըն առնելու միտումով:

### Այցելութիւն «Գալայնեան» Յանզստեան Տուն



Նոր Տարուայ առաջին օրը, Ուրբաթ, 1 Յունուար 2010ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեանի, այցելեցին «Գալայճեան» Յանգստեան Տուն եւ Ամանորեայ ու Ս. Ծննդեան լաւագոյն մաղթանքներով եւ անհատական նույներով պատուեցին մեր տարեց հայրերն ու մայրերը:

**Նիկոսիոյ Ս. Աստուածածին Յին  
Եկեղեցւոյ Վերանորոգում**



Ուրբաթ, 15 Յունուար 2010ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Թեմական Ժողովի ատենապետ Սեպուհ Դալիթեանի, Վարչական Ժողովի ատենապետ Տոքթ. Անդրանիկ Աշճեանի եւ ճարտարապետ ճոն

ԿԵՎԻԵՐԵԱՆԻ, հանդիպում մը ունեցաւ UNDP-ACT-ի պատասխանատուներուն հետ, որոնց հովանաւորութեամբ Նոյեմբեր 2009Էն արդէն սկսած են Նիկոսիոյ Ս. Աստուածածին հին Եկեղեցւոյ նորոգութեան աշխատանքները:

Ժողովին փոխանցուած է Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Եւ շրջակայ կառոյցներուն 2 փուլերով նախատեսուած նորոգութեան ծրագիրներուն մասին մանրամասնութիւններ:

Առաջին բաժինով պիտի նորոգուին Եկեղեցին ու մայրապետանոցի վանատունը, որոնց համար արդէն իսկ ապահովուած է գումար մը, իսկ երկրորդ բաժինով պիտի նորոգուին Առաջնորդարանը, մանկապարտեզը, Մելիքեան եւ Ուզունեան շենքերն ու բակը:

Իսկ Կիրակի, 24 Յունուար 2010ին, պատուիրակութիւն մը բաղկացած Վարուժան Արքեպիսկոպոսէ, Պե-



տական Ներկայացուցիչն, Թեմական ու Վարչական ժողովներու աստեսապետներէ Եւ ճարտարապետ ճոն ԿԵՎ-հերեանէ, այցելեց գրաւեալ շրջան, մօտեն տեղեկանալու սկսուած նորոգութեան աշխատանքներուն:

### ՀՅ Յունաստանի Եւ Կիպրոսի Դեսպանութեան Հիւպատոսի այց



Երկօրեայ այցելութեամբ Յինգշաբթի, 4 Փետրուար 2010ին Կիպրոս ժամանեց ՀՅ Յունաստանի Եւ Կիպրոսի Դեսպանատան անցեալ տարի նշանակուած Հիւպատոս Տիկ. Լիանա Գրիգորեան: Այցելութիւնը կազմակերպւած էր նախաձեռնութեամբ Պետական Ներկայացուցիչ Պրև. Վարդգէս Մահտեսեանի Եւ համագործակցութեամբ ՀՅ Յունաստանի Եւ Կիպրոսի Դեսպան Պրև. Գագիկ Ղալաչեանի, դիրացնելու համար Կիպրոս ժամանակաւոր կամ մշտական բնակութիւն հաստատած Հայաստանի Յանրապետութեան քաղաքացիներու անցագրային գանազան տեսակի հարցերը,

**Ճար. Էջ 12**

## **ՅԻԾԱՏԱԿԵԼԻ ՆՈՒԵՐ ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒՆ ՊՏՈՅՑ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՅՈՒԼԻՍ 2010ԷՆ ՄԿՍԵԱԼ**

Հաւատալով, որ սփիւռքահայ պատանի-պատանուհիներուն մատղաշ տարիքին Մայր Յայրենիք առաջին այցելութիւնը անհրաժեշտութիւն է, անոնց մեջ արթնցնելու Յայ մնալու, հայօրեն ապրելու եւ ապագային հայութեան ծառայելու իմաստով, յարմար նկատեցի իրազործել երկար տարիներէ ի վեր ունեցած փափաքս:

Անցեալ ամիսներուն, շարունակաբար խորհրդակցութիւններ ունենալէ ետք ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Լիազօր դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեանի հետ եւ գրաւոր ներկայացնելէ ետք առաջարկս, ուրախութեամբ կը յայտարարեմ, թէ որոշած եմ այս տարուայ Յուլիս ամիսն սկսեալ եւ մինչեւ այն ատեն որ կը պահեմ Ներկայացուցիչի հանգամանքս, Նարեկ Յայկական Վարժարաններու շրջանաւարտները անխտիր, երկու շաբթօնայ տեւողութեամբ, ուղարկել Յայաստան, ընկերակցութեամբ մի քանի ուսուցիչներու, որպեսզի այցելեն մեր Յայրենիքի պատմական ու տեսարժան վայրերը:

## **Այս շրջապտոյտին համար հարկ է տեղեկացնել, թե**

- ◆ Օդանաւային տոմսակները, վիզայի եւ օդակայան երթեւեկի ծախսերը պիտի յատկացուին իմ կողմէս
- ◆ Կեցութեան, սնունդի եւ շրջապտոյտներու ծախսերը պիտի հոգայ Հայաստանի Կառավարութիւնը

Այս հարցով, անցեալ ամիս բերանացի տեղեակ պահած էի նաեւ Նարեկ Վարժարաններու հոգաբարձութեան ատենապետը, իսկ 16.03.2010 թուակիր նամակով մըն ալ պաշտօնապես հաստատած եղայ ծրագիրս իրագործելու որոշումը:

Յոյսով եմ, որ մեր շրջանաւարտներուն դեպի Հայրենիք այս այցելութիւնը պիտի ծառայէ իր բարի նպատակին:

**Վարդգես Մահտեսեան  
Կիպրահայ Համայնքի  
Պետական Ներկայացուցիչ**

17.03.2010

ինչպէս նաեւ հիւպատոսի Ներկայութիւն պահանջող փաստաթուղթերու եւ հաստատագիրներու ապահովումը:

Նախօրօք առնուած ժամադրութիւններով, Ուրբաթ 5 եւ Շաբաթ 6 Փետրուարին, Կիպրոսի բոլոր քաղաքներէն Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակ Ներկայացան աւելի քան 40 անհատներ ու ընտանիքներ, որոնք իրենց գոհունակութիւնը եւ երախտագիտութիւնը յայտնեցին այս կարգաւորումին գծով: Իր կարգին Յիւպատոս Տիկ. Լիանա Գրիգորեան բարձր գնահատեց կազմակերպուած բժախնդիր աշխատանքը եւ հիւպատոսութեան բացակայութեան Գրասենեակին կողմէ տարուած համադրումի աշխատանքը, ինչպէս նաեւ անհրաժեշտ տեղեկութիւններ եւ դիմումնագիրներ հայթայթելու ծառայութիւնը:

Ուրբաթ Երեկոյեան, Տիկին Յիւպատոսը Ներկայ գըտնուեցաւ Ազգային Կարչութեան կազմակերպած «Արամ Խաչատուրեան» լարային քառեակի համոյթի Ելույթին, Պետական Ներկայացուցիչին եւ տիկնոջը ընկերակցութեամբ, իսկ Շաբաթ, Նախօրան Յունաստան Վերադարձը, ան այցելեց Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոսին:

Յիշենք, թէ այս Երկրորդ անգամն է, որ Երկօրեայ այցելութեամբ Կիպրոս կը ժամանէ Յայաստանի Դեսպանութեան հիւպատոսը: Նախօրդը կազմակերպուած էր 31 Յունուար 2007ին, հիւպատոս Լիլիթ Սարգսեանի օրոք:

### **«Կիպրոսի Փոքրամասնութիւններու Քաղաքական Ապագան»**

Յինգշաբթի 18 Փետրուար 2010ին, Կիպրոսի Պետական Յամալսարանին մէջ, միացեալ կազմակերպու-



թեամբ ՏԻՄի Կուսակցութեան Ելրոպական Յարցերու Եւ Կրօնական Փոքրամասնութիւններու յանձնակատարներուն, տեղի ունեցաւ հաւաք մը «Կիպրոսի Փոքրամասնութիւններու Քաղաքական Ազագան» նիւթով, որուն հրաւիրուեցան մասնակցելու Եւ խօսք առնելու Մարոնիթներու, Յայերու Եւ Լատիններու Ներկայացուցիչները: Օրուայ պատգամախօսն էր Կիպրոսի Յանրապետութեան նախկին ընդիհանուր դատախազ Ալեքսոս Մարքիտիս:

Պետական Ներկայացուցիչը խօսք առնելով անդրադարձ կատարեց ընդիհանրապես Կրօնական Փոքրամասնութիւններու իրավիճակին Եւ ի մասնաւորի ընդգծեց



Յայ Յամայնքին դիմագրաւած դժուարութիւնները Ներկայ պայմաններուն տակ, որոնցմէ ամենահիմնականը Յունարենին՝ Մայրենի լեզուին նման լաւ տիրապետած չօլլալը, լուրջ արգելք կը հանդիսանայ Կիպրահայ գաղութի երիտասարդ անդամներուն մրցելու եւ ապահովելու համապատասխան կառավարական պաշտօններ: Իսկ Մելգոնեան Կրթական Յաստատութեան փակումը ծանրակշիռ դերակատարութիւն ունեցաւ Կիպրահայութեան կեանքնեն ներս, ըլլալով միակ հայեցի երկրորդական կրթութիւն մատուցող հաստատութիւնը: Շարունակելով, Պրն. Մահտեսեան շեշտեց Փոքրամասնութիւններու Ներկայացուցիչներուն խորհրդարանեն ներս համահաւասար իրաւասութիւններ ունենալու կարեւորութիւնը, որպէսզի անոնց դիրքը ալ աւելի ամրապնդուի ու ծայնը լսելի դառնայ:

## SIGMA «Հայերը Կիպրոսի մեջ»

Երեքշաբթի, 23 Փետրուար 2010ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ պատմագէտ Ալեքսանդր Յաճիլիրայի եւ Ներկայութեամբ X-Factor-ի մասնակիցներէն Յովիկ Տեմիրճեանի, հրաւիրուեցաւ SIGMA հեռատեսիլի կայանի «Մե տην Էլιτα» յայտագիրէն Ելոյթ ունենալու: «Հայերը Կիպրոսի մեջ» նիւթով, մօտ երկու ժամ տեսողութեամբ SIGMA կայանէն անդրադարձ կատարուեցաւ Յայոց Ցեղասպանութեան, Կիպրահայութեան անցեալի ու Ներկայ պատմութեան, Կիպրոսի ժողովուրդին հետ ունեցած Կիպրահայութեան սերտ կապին ու Կիպրոսի հանդեպ Յայ գաղութին ունեցած Երախտագիտութեան մասին: Յայ թէ յոյն անհատներ, յայտագիրի ընթացքին հեռաձայնային կապ հաստատելով, գնահատական խօսքեր արտայայտեցին Պետական Ներկայացուցիչին Նկատմամբ: Յովիկ, որ X-Factor-ի մըրցանքին իր մասնակցութեամբ հմայած է Կիպրոսի ժողովուրդը, յայտագիրը հարստացուց ու ճոխացուց կենդանի երկու երգ երգելով, անգամ մը եւս փաստելով իր տաղանդը: Իսկ Կիպրահայ ժողովուրդի պատմութեան ու աւանդութերուն քաջածանօթ ըլլալով, Ալեքսանդր Յաճիլիրան ճարտար ճեւով Ներկայացուց գաղութին առանձնայատկութիւնները:

Եզրափակելով ըստնք, թէ յայտագիրի յաջող հեռարձակումը Յայ գաղութին Նկատմամբ անսպասելի հետաքրքրութիւն եւ առաւել հիացմունք ստեղծեց Կիպրոսի զանազան խաւերուն մեջ:

## Ծնորհաւորական գիր

Պետական Ներկայացուցիչը 1 Մարտ 2010 թուակիր գիրով մը շնորհաւորեց Պրև. Դանիել Չորպաճեանը եւ Պրև. Յովիկ Նասանեանը բացառիկ յաջողութեամբ բե-

մադրած «My Fair Lady» երաժշտական թատրերգութեան առիթով, մաղթելով անոնց եւ «Premier Group»ին ապագայ նորանոր նուաճումներ: Յսու տեղին է յիշել, թէ Տէր եւ Տիկին Մահտեսեաններ յատուկ հրաւեր ստանալով բեմադրիչներէն, Շաբաթ, 27 Փետրուար 2010ին, Ներկայ գտնուեցան Ներկայացումին, որ տեղի ունեցաւ Pallas թատերասրահին մէջ:

### **Զեռնարկներու Ներկայութիւն**

Կիրակի, 31 Յունուար 2010ին, Տէր եւ Տիկին Մահտեսեաններ հրաւիրուեցան Ներկայ գտնուելու Յամազգային «Օշական» մասնաճիւղի կազմակերպած Վարդան Պետրոսեանի «1000 ու մի ելք» Ներկայացման, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մէջ:

Երկուշաբթի, 1 Փետրուար 2010ին, Պետական Ներկայացուցիչը Նիկոսիոյ սահմանին վրայ գտնուող Ledra Palace պանդոկին մէջ Ներկայ գտնուեցաւ ՄԱԿի Ընդհանուր Քարտուղար Պան Ջի Մուսի ի պատիւ տրուած հիւրասիրութեան:

Կիրակի, 7 Փետրուար 2010ին, Պրև. Մահտեսեան Ներկայ գտնուեցաւ Մարոնիթներու Եկեղեցւոյ արարողութեան, Ս. Մարուն տօնի 1600ամեակին առիթով:

Ուրբաթ, 19 Փետրուար 2010ին, Պետական Ներկայացուցիչն եւ Սրբազն հօր հովանաւորութեամբ, բացումը կատարուեցաւ Յայրենի արուեստագիտուիի Կարինէ Ղահրամանեանի ցուցահանդեսին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մէջ:

Կիրակի, 21 Փետրուար 2010ին, Պրև. Մահտեսեան, յատուկ խնդրանքով Յայ Երիտասարդաց Միութեան Վարչութեան, բացումը կատարեց Վերանորոգուած ակումբի հիւրասրահին ու իր տիկնոջը հետ Ներկայ գըտնուեցաւ այս առթիւ կազմակերպուած ճաշին:

Շաբաթ, 13 Մարտ 2010ին, Տեր եւ Տիկին Մահտեսեաններ հրաւեր ստանալով Ներկայ գտնուեցան «Գալայճեան» հաստատութեան վարչութեան կազմակերպած «Յեղասպանութեան թանգարանը եւ Յայ-Թուրք արձանագրութիւնները» նիւթով դասախոսութեան, հովանաւորութեամբ Վարուժան Արքեպիսկոպոսի, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մէջ: Օրւան պատգամախօսն եր Երեւանի Յեղասպանութեան թանգարանի տնօրին Յայկ Դեմոյեան:

Երկուշաբթի, 22 Մարտ 2010ին, Պետական Ներկայացուցիչը Ներկայ Եղաւ European University-ի կազմակերպած՝ միջ-կրոնական համագործակցութեան ծիրէն Ներս լուսաբանական բնոյթ ունեցող ձեռնարկին, Յայ եւ Մարոնիթ համայնքներու մասնակցութեամբ:

Երեքշաբթի, 23 Մարտ 2010ին, Պոն. Մահտեսեան ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի մօտ Յուլանտայի դեսպան Jan Eric van der Berg-ին հետ:

Չորեքշաբթի, 24 Մարտ 2010ին, Տեր եւ Տիկին Մահտեսեաններ Ներկայ գտնուեցան Կիպրոսի Սիմֆոնիք Նուագախումբի նախաձեռնած «A musical pilgrimage across five continents» համերգին, սովորանո Սոնա Կարկալոյեանի եւ թենոր Պերճ Ջրագեանի մասնակցութեամբ, Ստրովոլոսի Ջաղաքապետարանի սրահին մէջ:

### **Յաւակցագիր**

Երկուշաբթի, 8 Մարտ 2010ին, Պետական Ներկայացուցիչը ցաւակցագիր մը յդեց Յալեաի Յայոց Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանին, Յալեաի ծառայասէր ու անձնուեր ազգային Տարօն Աւետիսեանի վաղաժամ մահուան տիսուր առիթով: Ան իր խոր վշտակցութիւնը փոխանցեց նաեւ հանգուցեալին ընտանեկան պարագաներուն:



## **Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան Օրենքներուն**

**Օտարահպատակներու  
Եւ Ներգաղթի Բաժանմունք  
2007թ. Օրենքի գլուխ 105**

Աշխատանքային եւ Ընկերային Ապահովագրութեան Նախարարութին, ի մտի ունենալով Կիպրոսի Հանրապետութեան աշխատանքային շուկային իրավիճակը եւ խորհրդակցելէ Ետք հանրային ընկերութիւններուն հետ, որոշեց Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքի օրենքներու Հատ. 1 թիւ 18NE յօդուածի հիմամբ, ճշդուած 2007թ. գլուխ 105 գծով իր իրաւասութիւնները գործածել եւ 18.12.2009էն սկսեալ, սահմանափակեց օտար ուսանողներու աշխատանքային զբաղումներու իրաւունքը միայն ստորեւ նշուած մարգերէն ներս.-

- ◆ Մեծաքանակ ապրանք ներածող վաճառականներու մօտ բեռնակիր
- ◆ Պենզինի կայաններու մէջ աշխատաւոր կամ ինքնաշարժ լուացող
- ◆ Ծերանցներու մէջ հոգատար (եթէ այս մարզին մէջ օրենքով սահմանուած անհրաժեշտ պայմանները կը լրացնեն)

- ◆ Տևային գործերու առիթներով օգնական
- ◆ Յողագործական, անասնապահական, ձկնորսական գործերու աշխատաւոր
- ◆ Շենքերու կամ կոյուղիներու մաքրութեան գործաւոր
- ◆ Fast Food հայթայթող ընկերութիւններու Delivery boy

Իսկ անոնք, որոնք կ'ուսանին զբոսաշրջիկութեան ոլորտէն ներս կամ կը հետեւին ելեկտրոնային կամ մեքենական ճիւղերու դասընթացքներու, փորձառութիւն ձեռք ձգելու միտումով, իրաւունք ուսին աշխատելու ամառուայ արձակուրդի շրջանին միայն 1 Յունիսին-15 Յոկտեմբեր, այն պայմանով, որ գործատիրոջ եւ Կրթական հաստատութեան միջեւ գրաւոր համաձայնագիր ապահովելու դիմում ներկայացուած է Աշխատանքային Գրասենեակին մօտ:

**Վարդես Եւ Մակի Մահտեսեաններ  
Քրիստոսի Յարութեան  
Սուրբ տօնին առիթով  
կը շնորհաւորեն  
Կիպրահայ Համայնքը  
Եւ մեր հայրենակիցները,  
մաղթելով  
առողջութիւն Եւ արեւշատութիւն:**

**Քրիստոս յարեաւ ի մեռելոց,  
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի**

**ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

**Քաղաքական Գրասենեակ**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցե office@armenianmp.com

Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

**Խորհրդարանական Գրասենեակ**

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցե vmahdessian@parliament.cy